ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ՈՐՈՇՄԱՄԲ ԱՐՁ. Ն3, ԿԱՅԱՑԱԾ 12.09.2018թ.
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
_____ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) տեղեկատվական հասանելիությունը և թափանցիկությունը հանդիսանում է Ակադեմիայի գործունեության որակի կառավարման հիմնական ցուցիչներից մեկը: Հասարակությանը տեղեկատվության տրամադրման արդյունքում Ակադեմիան կայուն կապ է հաստատում նրա հետ: Որքան արդյունավետ է կապը հասարակության հետ, այնքան Ակադեմիան ավելի լավ է բացահայտում իր գործունեության առավելությունները, ուժեղ և թույլ կողմերը: Ակադեմիայի նպատակն է իր գործունեության որակի բարելավման նպատակով կապ հաստատել հասարակության հետ, այսինքն ապահովել հետադարձ կապը հասարակությունից: Հետադարձ կապն ուղղված է Ակադեմիայի գործունեության վերաբերյալ կարծիքների ուսումնասիրմանը, գործունեության և գործընթացների բարելավմանը: Հասարակության հետ կապի հաստատման և հետադարձ կապի ապահովման նպատակներն են՝

1. հասարակության տեղեկացումն Ակադեմիայի գործունեությանը,
2. հասարակությունից՝ հետադարձ կապի մեխանիզմներով և գործիքներով, կարծիքների և պահանջների հավաքագրումն ու ուսումնասիրությունը և վերլուծությունը,

3. վերլուծությունների հիման վրա կրթական գործունեության բարելավումը,
4. արդյունքների հիման վրա կրության բարելավմանն ուղղված միջոցառումների և որոշումների վերաբերյալ հասարակության տեղեկացումը:

Կապն Ակադեմիայի և հասարակության միջև ոչ միայն տեղեկատվության տարածումն է, այլև հետադարձ կապի միջոց է՝ տեղեկատվական հոսքերի կարգավորման գործիք: Հասարակության հետ հետադարձ կապը նպաստում է Ակադեմիայի գործունեության բարելավմանը, կատարելագործմանը և ըստ հասարակության կարծիքի կրթական ծրագրերի և ծառայությունների զարգացմանը: Հասարակության հետ հետադարձ կապը որակի գնահատման հիմնական բաղադրիչներից է, որը պետք է հաշվի առնի հետադարձ կապը շրջանավարտներից, գործատուներից, ուսանողների ծնողներից և այլ շահակիցներից:

Հասարակություն - Ակադեմիա հետադարձ կապի ապահովման գործընթացը պետք է կրի անընդհատ բնույթ, հաշվի առնի շահակիցների կարծիքները և դրանց ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը՝ Ակադեմիայի հետագա պլանները մշակելիս:

Հետադարձ կապի մեխանիզմներ և գործիքներ.

Հետադարձ կապի մեխանիզմ կարող են հանդիսանալ հարցումները, ֆոկուս-խմբերը, սեմինարների ժամանակ հնչած կարծիքները, տվյալ գործընթացի կամ Ակադեմիայի գործունեության վերաբերյալ կայքի հետադարձ կապով ստացված

մեկնաբանությունները: Հասարակության բոլոր անդամները պետք է հնարավորություն ունենան օգտվել հետադարձ կապից:

Հետադարձ կապի մեխանիզմի հիմնական տարրերն են՝

- մշտադիտարկում,
- վերլուծություն,
- ադապտացում,
- պլանավորում:

Հետադարձ կապի հիմնական մեխանիզմներն են՝

- հասարակական կարծիքի ուսումնասիրություն (հարցումներ, հետազոտություններ, ֆոկուս-խմբեր),
- միջոցառումներ, սեմինարներ, հաշվետվություններ և այլն,
- հասարակությունից ստացված կարծիքների ուսումնասիրություն,
- ԶԼՄ-եր:

Հետադարձ կապի հիմնական գործիքներն են՝

- Ակադեմիայի կայքի հետադարձ կապի գործիքը,
- հարցաթերթիկներ,
- հանդիպումների արդյունքների արձանագրությունները:

Քաղաքականության իրականացումը հնարավորություն կտա՝

- չափել Ակադեմիայի գործունեության արդյունավետությունը,
- հասարակության անմիջական և ոչ անմիջական ներգրավումը Ակադեմիայի կառավարման գործընթացներին,
- զարգացնել կապը հասարակության հետ: